բունդ պահպանում է իւր յիշողութեան մէջ. դոքա անցեալ կեանքի փշրանքներն են՝ կապուած այս կամ այն եղելութեան հետ։ Աւանդութիւնները զարթեցնում են ժողովրդի մէջ կրօնական, հայրենասիրական և այլ վսեմ զգացմունքներ, որովհետև կազմուած են այնպիսի անձնաւորութիւնների և կամ վայրերի մասին, որ սրբացած են ժողովրդի համար։ Իրաւամբ, ուրեմն, աւանդութեան վերայ կարելի է նայել իբրև ազգայնութեան որոշիչ մի տարրի վերայ։

Գրականութեան պատմութեան ուսումնասիրութիւնը պարզում է բանահիւսութեան մեծ նշանակութիւնը նաև գրականութեան համար, որի տեսակները ժողովրդական բանահիւսութիւնից են առել իրենց ծագումը։ Ցունաց մատենագրութեան ուսումնասիրութիւնը անհերքելի փաստ է տալիս դորա համար. դրամայի, քնարերգութեան, վիպասանութեան սաղմերը ժողովրդական վէպից են հետզհետէ զարգացել և ինքնուրոյնութիւն ստացել[1])։ Գրականութեան պատմութեան և գեղասիրական տեսութիւնների ուսումնասիրութիւնը մեծ կապ ունի ժողովրդական բանահիւսութեան հետ. տեսութիւնը գեղարուեստական երկերից պէտք է հանել, իսկ Իլիականը, Նիբելունգների երգը, ֆրանսիական Chansons de Rolande-ը, սերբական դիւցազնական երգերը ժողովրդական վիպական բանահիւսութեան յաւիտենական կոթողներն են։ Նշանաւոր բանաստեղծներ օգտուել են ժողովրդական նիւթերից իրենց երկերը ստեղծելու համար. Շեկսպիրն իւր գլուխ-գործոց Համլետը դանիական աւանդութիւններից ստեղծեց։

Այսպէս տեսնում ենք, որ բանահիւսութիւնն էլ՝ իբրև մարդկային մտքի, զարգացման և երևակայութեան արդիւնք, իբրև գեղարուեստական ստեղծագործութիւն, արժանի է ուշադրութեան։

Բացի սորանից՝ բանահիւսութիւնը իբրև պատկեր ժողովրդական կեանքի, պատմութեան ուսումնասիրութեան աղբիւրներից մէկն է համարուում. իրաւամբ Վեսելովսկին, խօսելով ժողովրդական բանահիւսութեան մասին, յայտնում է այն միտքը թէ

---

[1]) Корпъ I.